

23680

၂၃၆၈၀

899.9621

၂-၉၈

၂၃၆၈၀
၁၉၁၁

33 3

ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Հրատարակութիւն և թարգմ. Ղ. Կարապետեանի

№ 2

ԹԻՓՓ. ԽՈՒՍԿԻՎԱՉԻ

ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆԸ

(Էսկիզ)

ԳԻՆՆ Է 3 ԿՈՄԻԿ

Երկրորդ տպագրութիւն

2003

899.962

Խ-98

ԹԻՖԼԻՍ

Հրատարակ. «Էսկիզ» 1911

1911

4999

ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Հրատարակութիւն և թարգմ. Դ. Կարապետեանի

899.962

№ 2

Խ-98

ԹԷՌՓ. ԽՈՒՍԿԻՎԸԸԻ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

(Էսկիզ)

Երկրորդ հրատարակութիւն



245
44

ԹԻՖԼԻՍ

Արագածոտի «Էսկիզներ»
1911

ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆԸ

Ես շատ եմ սիրում գերեզմանատանը գրօմներ և յաճախ եմ լինում այնտեղ: Ո՞վ գիտէ այդտեղ հարթ տարածութեան վրայ՝ քանի տեսակ կրօնի ու դաւանութեան պատկանող կենդանի ապրողներին ներկայացուցիչներ են հաւաքուած.... Դրանք համախմբուել են միասին, ամուր կպել միմեանց և հանգչում են այդտեղ երկարատև քնով... Նրանցից այլ ևս չի լսում թէ տրտունջ, ո՛չ վիշտ, ո՛չ նախանձ, դրանցից ոչ ոք ո՛չ անհաւատարիմ է, ո՛չ թշնամի միւսի և ո՛չ էլ ատում է ուրիշներին.... Դրանց թւում չկայ ո՛չ մի դժգոհ կամ ըմբոստ.... Ամեն մէկը գոհ է իր վիճակից.... ամեն տեղ տիրում է անդորրութիւն, մարդասիրութիւն և համերաշխ կեանքն է թագաւորում այնտեղ.... Այլ ևս չեն լսում դժբաղդ թշուառների մշտական սրտաճմլիկ հեծեծանքներն ու հառաչանքները, չէք տեսնում նրանց տկլոր, ոտաբոբիկ փոզոցներում թափառելիս՝ մի կտոր հաց մուրալու համար....

Այնտեղ ո՛չ դատաստան կայ, ո՛չ էլ դատաւոր, որովհետև ոչ ոքի հարկաւոր չեն այդ բաներ.... Թւում է թէ այնտեղ ամենքն էլ գոհ են իրանց վիճակից, իրանց դրութիւնից.... Այլևս ձեր աչքը չի ծակում մեծաւորների քմահաճոյքը, փառասիրութիւնը... Կարծես բնութեան աներևոյթ ոյժը ամենքին ևս հաւասարեցրել ու խաղաղացրել է.... Ո՛չ մէկի բերանից ձայն-ծպտուն չի լսում... Երևի դրանց կեանքը այնպէս է յարմարեցրած, որ ամեն բանի մէջ հաւասարութիւն լինի ամենքի վրայ, եղբայրասիրութիւն ու համերաշխութիւն տիրէ: Ոչ մի բանի մէջ պակասութիւն չի զգացւում, այնտեղ գոյութիւն չունի մեծ ու փոքր, իմ ու քո....

Ճիշտ որ նախանձելի է այդ տեսակ կեանքը, երբ մարդ ամեն բանից գոհ է և հանգիստ....

Սակայն մարդու սիրտը լինելով անկուշտ, ոչ միայն այդ համերաշխութիւնը չի գոհացնում նրան, այլ կարծես այդ համերաշխութիւնը ստորացնում է նրա հպարտ ինքնասիրութիւնը, այդ տեսակ միակերպութիւնն ու միօրինակութիւնը նա իր հպարտութեան համար նախատինք է համարում:

Մարդկային չափ չճանաչող ինքնասիրութիւնը այդտեղ էլ է կարծես գանազանութիւն դնում, վասնզի այդտեղ էլ է փառաբանում մեծութիւնը.... Հնապա նայեցէք ձեր շուրջը և ուշադրութեամբ զննեցէք: Սակայն այնքան էլ ուշադրութեամբ զննելու կարիք չկայ: Ահա ձեր աչքի առաջ, այնտեղ բարձրանում է բրօնզից շինած արձանը: Նա անխօս է, բայց ամեն ինչ ասում է. որովհետեւ արձանի փառահեղութիւնից և մեծութիւնից աչքի է ընկնում, թէ ով պէտք է լինի պառկած նրա տակ.... Սակայն բոլորովին մօտեցէք.... Այժմ հասկացա՞ք թէ ով է նա, համոզուեցա՞ք նրա ով լինելը: Այժմ նայեցէք նրա կողքին.... Արժանացրէ՞ք ձեր ուշադրութեան նաև հասարակ փայտեայ խաչի տակ գտնուողին: Մօտեցէ՞ք, կարդացէ՞ք: Գուցէ այդ փայտեայ խաչի վրայ էլ մի բան լինի արձանգրուած. «այստեղ հանգչում է՞ գիւղական ուսուցիչ Իվան Խաթրաձէն»:

Խեղճ—ողորմելի, ճիշտ որ գիւղական ուսուցիչ ես եղել, ճանաչում եմ, լաւ եմ ճանաչում քեզ, ով տարաբաղդ գործիչ, քո ով լինելը արդէն յայտնի է: Ո՞վ գիտէ թէ քանի-քանի քեզ նման

ճնշուած, ազնիւ աշխատաւորի արիւնքըտինքով վաստակած հացի կտորը յափշտակել ու կուլ է տուել կողքիդ գտնուող շքեղ արձանով հարեանդ: Կասկած չկայ, որ քո լուման ես նրա վրայ դրած արձանի փառահեղութեան համար է գործադրուել: Սակայն սրբանանթիւ մեղքեր են պատւում այդ փառահեղ արձանի շուրջը.... Նրա կեանքի կենսազրաւան էջերը լի են զազրելի կեղտոտութիւններով, որոնց յաճախ գուլինքդ էլ վկայ ես եղել.... Քո սիրտը լցւում էր դառնութեամբ, որ չէիր կարողանում մաքառել.... Բայց քաղցը յոյսերով շունչդ փչեցիր, կարծելով թէ հանդերձեալ աշխարհում պատշաճ տեղ կունենայիր, գէթ մահուանից յետոյ արժանի կերպով կը գնահատէին քեզ... Ո՛հ, դժբաղդ: Երանի՜ թէ յայտնի լինէր քեզ, որ այդ բանում ես յուսախաբուած ես եղել լոկ յոյսերով: Երանի կենդանի լինէիր ու տեսնէիր շքեղ արձանով հարեանիդ յուղարկաւորութեանը, և ակնատես լինէիր գերեզմանատանը, անցած-դարձածին: Նա, ով նրա կենդանութեան ժամանակ եղել էր նրա երդուեալ թշնամին, նախատողն ու ամենուրէք

վրիժառու, գլխի մօտ կանգնած ճառախօսում էր.... մեծ գովասանքներով պսակում նրա գլուխը.... պերճախօս կերպով դրուատում էր հանգուցեալ աշխարհին հարստութեան փառքը, արիւթիւնն ու կորովամտութիւնը: Համարեա ամբողջ քաղաքը ներկայ էր.... Այս ահագին գերեզմանատունը լի էր բազմութեամբ.... իսկ մահուանից յետոյ՝ ահա այս փառահեղ մահարձանն է ազդարարում ամբողջ աշխարհին նրա ո՛վ լինելը....

Իսկ դ՞ու՞, դ՞ու՞, ողորմելի գործիչ. արդեօք յայտնի՞ է քեզ թէ ինչ ձևով կատարուեց քո յուզարկաւորութիւնը: Հազիւ կարողացան երկու մարդ գտնել՝ քո դագաղը տանելու համար.... Քո մահը բացի քո աշակերտներից ոչ ոքի յայտնի չէր... Եւ արդեօք ո՞ւմ կարող էր ցաւ պատճառել քո կորուստը, եթէ ոչ դարձեալ այդ աշակերտներիդ, որոնց սրտում բարի սերմեր էիր ցանում մեր դժբաղդ հասարակութեան օգտակար անդամներ լինելու... Ահա այդ փայտեայ խաչը անմխիթար մնացած մօրդ նուէրն է.... Ի հարկէ, վրայիդ փայտեայ խաչը անշուք է և հասարակ, բայց և պարզ ցոյց է տա-

լիս քո անշահասէր ու անաչառ գործունէութիւնը... փայտեայ խաչ, բայց դիմացկուն ու մաքառող բոլոր արգելքներին... Փայտեայ խաչ, բայց դիմացկուն այն բրօնզից, որ հպարտօրէն բացձրացել է և իր հայեացքով իշխում է իր շուրջը... Սակայն վաղանցուկ իշխանութիւն...

Մի ընկճուիր, տարաբաղդ գործիչ, մի վհատուիր, որ այդպէս անշուք հանգչում ես այստեղ: Աշակերտներիցդ ամեն մէկի կուրծքը քեզ համար կենդանի յուշարձան է... Բոլոր աշակերտներիդ կրծքի տախտակի վրայ արձանագրուած է երախտագէտ շնորակալութիւն. խորին սէր և անմահ յիշատակ: Թո՛ղ քեզ չ'վհատեցնէ, բրօնզեայ արձանի փառահեղութիւնը և ոչ էլ նրա գագաթի փայլուն խաչը: Այդ բոլոր արդիւնք է անձնական կարողութեան, հարստութեան և նշան ունայն փառասիրութեան:.. Թէ ի՞նչ է արել նա յօգուտ ճնշուածների, այդ պարզ ապացուցանում է նրա արձանի շուրջը բուսած խիտ փշերը... Օր չէր անցնի, որ չքաղեն ու չմաքեն, բայց գերեզմանի պարարտ հողը նոյնանման փշերը արագ-արագ բուսցնում է...

Մինչդեռ քո փայտեայ խաչի շուրջը
 գրաւիչ կերպով զարգարել են վարդի
 թփերը, որոնք իրանց կոկոններէց յորդ
 արցունքների նման ցողից առուակներ
 են հոսեցնում վրադ: Նրանց անուշա-
 հոտ բուրմունքից գինովցած սոխակը
 իր անոյշ դալալով քո երախտիքը
 հեռո՛ւ—հեռո՛ւ է սփռում և ազդա-
 րարում համայն աշխարհին: Այդ էլ
 բաւական է քեզ, իմ անգին գործիչ:
 Այստեղ հանգիր այն հաւատով՝ որ քո
 անձնագոհ հոգու տանջանքները իզուր
 չեն անցել... քո ցանած սերմերը ան-
 պտուղ չեն կորել... քո սկսածը մինչև
 այժմ անընդհատ շարունակում են՝
 իրանց ամբողջ հոգւով քո սիրած բա-
 րի գործերին նուիրուած եղբայրակից-
 ներդ... Նրանք էլ քեզ նման բարոյա-
 կան գէնքերով են զինուած... Բայց
 այն՝ ինչ որ դու չկարողացար իրագործ-
 ծել, այժմ նրանց բարոյական պար-
 տականութիւնն է դարձել իրագործելու:
 Ուրեմն էլ մի տխրիր, հանգստացիր
 խաղաղութեամբ և այլ ևս մի նախան-
 ձիր քո վիճակակից հարեանի ունայն
 փառքին:

47

ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Նինոզվիլի Է. «Հրաման» երկրորդ
տպագր. 5 կ.
2. Սուսկիվաձէ Թ. «Գերեզմանատա-
նը» երկ. տպգր. 3 կ.
3. Գուտու - Մէզրելի. «Անմեղ զոհ»
(տպառուած) 8 կ.
4. Ղազրէզի Ա. «Ֆաթի» (տպառուած) 5 կ.
5. Էկալաձէ Իս. «Լուսնեակ գիշերին...»
(էսկիզ). 5 կ.
6. Նինոզվիլի Է. «Գոգիա Ուիշվիլի»
(տպառուածը Գուրիայի կեանքից). 8 կ.
7. Կլզիաշվիլի Դ. «Ծխականների
մէջ» (տպակեր) 10 կ.
8. Գոգերաշվիլի Է. «Ի՞նչ արաւ օրօ-
րոցի երգը» (տպառուածը 8 տպակերով) 10կ.

Վաճառում են Թիֆլիսի բոլոր գրա-
վաճառանոցներում:

2013

23680

